ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ
Բնակիչների իրավունքների մասին հայտարարագիր

3 (1) Երկարաժամկետ խնամքի հաստատության յուրաքանչյուր արտոնված անձ պետք է ապահովի, որ լիովին հարգվեն և պահպանվեն բնակիչների հետևյալ իրավունքները.

ՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի, որ իրեն վերաբերվեն քաղաքավարի և հարգալից՝ այնպես, որ լիովին հաշվի առնվի իր արժանապատվությունը, արժանիքը և անհատականությունը՝ անկախ իր ռասայից, ծագումից, ծագման վայրից, մաշկի գույնից, էթնիկ պատկանելությունից, քաղաքացիությունից, հավատամքից, սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, գենդերային արտահայտությունից, տարիքից, ընտանեկան վիճակից կամ հաշմանդամությունից:
2. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ստանալ հարգալից վերաբերմունք իր կենսակերպի և ընտրության նկատմամբ:
3. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի, որ հարգվի իր մասնակցությունը որոշումների կայացմանը:

ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՏԵՍՈՒՄԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

4. Յուրաքանչյուր բնակիչ ունի ոտնձգություններից զերծ մնալու իրավունք:
5. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի զերծ լինել արտոնված անձի և անձնակազմի կողմից անտեսումից:

ԿՅԱՆՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ

6. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի գաղտնի հաղորդակցվելու, իր ընտրած այցելուներին ընդունելու և, առանց միջամտության, ցանկացած անձի հետ անձնապես խորհրդակցելու:

7. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի հաստատել ընկերական կապեր և հարաբերություններ, ինչպես նաև մասնակցել երկարաժամկետ խնամքի հաստատության կյանքին:
8. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի սենյակը կիսել մեկ այլ բնակչի հետ՝ իրենց փոխադարձ համաձայնության հիման վրա, եթե առկա է կացության համապատասխան հնարավորություն:
9. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի առանձին հանդիպել իր ամուսնու կամ մեկ այլ անձի հետ՝ գաղտնիություն ապահովող սենյակում:
10. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իրագործել իր սոցիալական, մշակութային, կրոնական, հոգևոր և այլ հետաքրքրությունները, զարգացնել իր ներուժը և արտոնված անձի կողմից ողջամիտ օգնություն ստանալ՝ այդ հետաքրքրություններն իրագործելու և իր ներուժը զարգացնելու համար:
11. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ապրելու անվտանգ և մաքուր միջավայրում:
12. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի մուտք ունենալ պահպանվող բացօթյա տարածքներ՝ բացօթյա գործունեությամբ զբաղվելու համար, եթե ֆիզիկական միջավայրը դա անհնարին չի դարձնում:
13. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իր սենյակում պահել և ցուցադրել անձնական իրեր, նկարներ ու կահավորանք՝ անվտանգության պահանջներին և այլ բնակիչների իրավունքներին համապատասխան:
14. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ինքնուրույն տնօրինել իր ֆինանսական միջոցները, եթե նա զրկված չէ դա անելու իրավական կարողությունից:
15. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իրացնել իր քաղաքացիական իրավունքները:

ՈՐԱԿՅԱԼ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

16. Յուրաքանչյուր բնակիչ ունի պատշաճ կացարանի, սննդի, խնամքի և իր կարիքներին համապատասխանող ծառայությունների իրավունք:

17. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իմանալ, թե ով է պատասխանատու, և ով է ապահովում իր անմիջական խնամքը:
18. Յուրաքանչյուր բնակիչ գաղտնիության իրավունք ունի իր բուժման և անձնական կարիքների սպասարկման հարցում:
19. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի.

    i. լիարժեք մասնակցել իր խնամքի պլանի մշակմանը, իրականացմանը, վերանայմանը և վերափոխմանը,

    ii. համաձայնություն տալ կամ մերժել ցանկացած բուժում, խնամք կամ ծառայություն, որի համար օրենքով պահանջվում է իր համաձայնությունը, և տեղեկացված լինել համաձայնություն տալու կամ մերժելու հետևանքների մասին,

    iii. լիովին մասնակցել իր խնամքին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ որոշումների կայացմանը, ներառյալ իր ընդունման, դուրսգրման կամ երկարաժամկետ խնամքի հաստատություն ընդունվելու կամ դրանից տեղափոխվելու վերաբերյալ ցանկացած որոշմանը, և ստանալ այդ հարցերի վերաբերյալ անկախ կարծիք,

    iv. ունենալ իր անձնական առողջական տվյալների գաղտնի պահպանման իրավունք, ինչպես սահմանված է *«Անձնական առողջապահական տվյալների պաշտպանության մասին»* 2004 թ. օրենքում, և հասանելիություն ունենալ իր անձնական առողջական տվյալների արձանագրություններին, ներառյալ իր խնամքի պլանին՝ նշված օրենքի համաձայն:

20. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իր խնամակալներից շարունակական և անվտանգ աջակցություն ստանալ՝ իր ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հուզական բարեկեցությունը և կյանքի որակն ապահովելու համար, ինչպես նաև օգնություն ստանալ խնամակալի կամ այլ անձի հետ կապվելու հարցում՝ իր կարիքները հոգալու համար:
21. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի, որ իր ընկերը, ընտանիքի անդամը, խնամակալը կամ բնակչի համար կարևոր այլ անձ ներկա գտնվի արտոնված անձի կամ հաստատության անձնակազմի անդամի հետ հանդիպմանը:

22. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի նշանակել որևէ անձի, որը կստանա իր տեղափոխման կամ հոսպիտալացման վերաբերյալ տեղեկատվություն, և որ այդ անձին անհապաղ տրամադրվի այդ տեղեկատվությունը:
23. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ստանալ խնամք և օգնություն՝ ինքնուրույնություն ձեռք բերելու համար՝ հիմնվելով վերականգնողական խնամքի գաղափարախոսության վրա, որով կարևորվում է անձի անկախությունը հնարավորին չափով առավելագույնի հասցնելու նպատակը:
24. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի չսահմանափակվելու՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված սահմանափակ հանգամանքների և սույն օրենքում սահմանված պահանջներին համապատասխան:

Նշում. փոխնահանգապետի կողմից հայտարարման ենթակա ամսաթվին Օրենքի 3(1) ենթաբաժնի 24-րդ պարբերությունը փոփոխվում է՝ հեռացնելով «սահմանափակվել» բառը և այն փոխարինելով «սահմանափակվել կամ ազատազրկվել» բառերով (Տես՝ 2021, c. 39, Sched. 1, s. 203 (3)):

25. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ստանալ խնամք և ծառայություններ, որոնք հիմնված են պալիատիվ խնամքի գաղափարախոսության վրա:
26. Յուրաքանչյուր մահամերձ կամ ծանր հիվանդ բնակիչ իրավունք ունի ընտանիքի անդամների և ընկերների ներկայության օրական 24 ժամ:

ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ, ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

27. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի գրավոր տեղեկանալու իրեն մատուցվող ծառայություններին առնչվող ցանկացած օրենքի, կանոնի կամ քաղաքականության, ինչպես նաև բողոքներ նախաձեռնելու ընթացակարգերի մասին:
28. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի մասնակցել Բնակիչների խորհրդին:

29. Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի իր կամ ուրիշների անունից մտահոգություններ հայտնել կամ առաջարկել քաղաքականության և ծառայությունների փոփոխություններ հետևյալ անձանց և կազմակերպություններին՝ առանց միջամտության և հարկադրանքի, խտրականության կամ հաշվեհարդարի վախի, անկախ նրանից, թե դրանք ուղղված են բնակչի, թե որևէ այլ անձի դեմ.

i. Բնակիչների խորհրդին,

ii. Ընտանեկան խորհրդին,

iii. արտոնված անձին, կամ եթե արտոնված անձը կորպորացիա է՝ կորպորացիայի տնօրեններին և պաշտոնյաներին, ինչպես նաև Մաս IX-ի համաձայն հաստատված հաստատության դեպքում՝ 135-րդ բաժնի համաձայն հաստատության կառավարման կոմիտեի անդամին, կամ 128-րդ կամ 132-րդ բաժնի համաձայն՝ հաստատության կառավարման խորհրդի անդամին,

iv. անձնակազմի անդամներին,

v. պետական պաշտոնյաներին,

vi. երկարաժամկետ խնամքի հաստատության ներսում կամ դրա սահմաններից դուրս ցանկացած այլ անձի: